2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի դասվարի աշխատանքային հաշվետվություն

Դասվար՝ Ս. Մեսրոպյան

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Կրթական

- Առաջնորդվելով ԿԳՍՄ նախարարության հաստատած չափորոշչային պահանջներով, ստեղծել եմ տարեկան թեմատիկ պլաններ բոլոր առարկաներից և ներկայացրել հաստատման:
- Տարվա կտրվածքով նախատեսված բոլոր միջոցառումներն ու տեսադասերը, բաց դասը իրականացվել են:
- Թեմատիկ պլանով նախատեսված թեմաները լիարժեք ուսուցանվել են: Տոնական և հիշատակի օրերի բացթողումները խտացվել և ուսուցանվել են կիսամյակների ընթացքում:
- Տրվել են նախատեսված բոլոր թեմատիկ աշխատանքները մայրենիից, մաթեմատիկայից /թվով ութական/, << Ես և շրջակա աշխարհը>> առարկայից՝ 2 թեմատիկ աշխատանք: Գործնական աշխատանքները ևս կատարվել են ըստ նախատեսվածի, որոնք հիմնականում նպաստել են առօրյայում և կյանքում գիտելիքները ճիշտ ու տեղին կիրառելուն:
- Ուսարվա ընթացքում փորձի փոխանակման նպատակով կատարվել են փոխադարձ դասալսումներ, վերլուծվել դրանք:
- Ուստարվա ընթացքում լրացուցիչ աշխատանքներ են տարվել ԿԱՊԿՈՒ աշակերտ Ժորա Սաքանյանի և մյուս ետ մնացող աշակերտների հետ: Լրացուցիչ աշխատանքներ են տրվել լավ սովորող աշակերտներին:
- Բոլոր առարկաներից ծրագրերը կատարված են: Տրվել է ամառային հանձնարարություն:
- Առաջին կիսամյակում անց են կացվել տնօրինության կողմից գրավոր ստուգումներ <<Մայրենի>> և << Մաթեմատիկա>> առարկաներից և ունեցել ենք բարձր ցուցանիշներ:

- Տարեվերջին անց է կացվել գիտելիքների ստուգում <<Մայրենի>> և <<Մաթեմատիկա>> առարկաներից: